

## ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

### ՍԻՄՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՀՀ ՊԿ ակադեմիայի քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

Հանգուցային բառեր՝ քաղաքակրթություն, ազգ, մշակույթ, զարգացում, արդիականություն, ժամանակի ազդեցություն, հասարակարգի կերպափոխում, սոցիոմշակութային կերպափոխում, դեմոկրատիա, երկխոսություն:

Քաղաքական արդիականացումը քաղաքական համակարգերի գործառնման և զարգացման օրինաչափ գործընթաց է, որը արտահայտվում է ժամանակակից իրողություններին և պահանջներին, յուրահատկություններին և կոնկրետ պատմական դրության ինքնատիպությանը քաղաքական գործընթացների համապատասխանեցման օբյուկտիվ անհրաժեշտության մեջ:

Մարդկության զարգացման պատմությունը վկայում է այն մասին, որ նույնական հասարակությունները ձգտում են ինքնիշխանության: Իր դրսորման արժեքային բազմաչափության մեջ ինքնիշխանությունը թույլ է տալիս բնականոն արդիականացնել անհատ-հասարակություն-ազգպետություն հարաբերությունները՝ սահմանելով նրանցից բոլորի «Ես»-երի հարաբերական անկախություն և համախմբվածություն անվտանգության ապահովման նկատառումներով:

Այսինքն՝ յուրաքանչյուր մարդու, հասարակության և ազգի գերնպատակը անվտանգության բարձր մակարդակի պահպանումն է: Իսկ դրան հասնելու համար դասակարգվում են ազգային խնդիրներ և նպատակներ, որոնց բավարարումը ազգային շահերից բխող պայման է: Քաղաքական արդիականացման գործընթացը այդ համազգային խնդիրներից մեկն է, որի կարևորությունն ու նշանակությունը ուղիղ առնչություն ունեն ազգի կայուն զարգացման և ազգային անվտանգության պահպանման համար:

Կյանքի շարժընթացը ենթադրում է «իրավիճակի» և «որոշման ուղղմավարության» պարուրած շրջապտույտ, այսինքն՝ իրավիճակը ազդում է որոշման արդիականացման վրա, իսկ որոշման ազդեցությունն էլ՝ իրավիճակի կերպարանափոխման վրա: Այս շրջապտույտը փոխում է

դեպքերի զարգացման ընթացքը: Քանի որ յուրաքանչյուր ժամանակահատված անկրկնելի է, ապա առաջանում է որոշումների վերանայման ու վերաիմաստավորման կարիք: Այդ առումով մարդը, հասարակությունը, ազգը և պետությունը կամա թե ակամա կազմակերպում և մոդելավորում են հնարավոր ապագայի բոլոր ձևաչափերը իրենց ռացիոնալ և իռացիոնալ, ուղիղ կամ անուղղակի գործողությունների կամ անգործությունների միջոցով: Սակայն մարդու կողմից ժամանակի վրա կատարվող ազդեցությունը սահմանափակ է: Ժամանակի և ապագայի վրա «Էգոն» բացարձակ իշխանություն չունի: Ընդհանուր շարժը կատարվում է այն լրացնող կյանքի էներգիայով, սակայն շարժի վրա ազդում է նաև այնպիսի գերբնական և վերմարդկային ուժ, որը հնարավոր չէ դիտարկել և ուսումնասիրել ռացիոնալ բանականության շնորհիվ, քանի որ այն Աստվածային սկիզբ ունի: Դա է պատճառը, որ իրավիճակի վրա ազդում են մի շարք այնպիսի երևույթներ, որոնց մարդիք անվանում են «Հրաշք», այսինքն իրականություն, որը տրամաբանությունից դուրս է և գոյություն ունի անկախ ռացիոնալ ազդեցությունից:

Մարդկային հոգեվերլուծության բնագավառում Աստծու կամքի ազդեցության մասին ուշագրավ վերլուծություն է կատարել հոգեբան և փիլիսոփա Կ.Գ Յունգը: Նա, վերլուծելով երազների և «Արքետիպերի» ֆենոմենը, հանգում մի եզարկացության, որ մարդը անկախ իր հատկանիշներից նախ և առաջ ոգեղեն էակ է և, ելնելով դրանից, անհրաժեշտ է արժնորել ոգու գաղափարը և ընդունել նրա փոխաղկապված վիճակը Արարչի հետ: Որպես օրինակ՝ մտածողը ոգին համեմատում է ջրի կաթիլի հետ, իսկ Արարչին՝ օվկիանոսի: Կաթիլը, ի համեմատ օվկիանոսի, չնչին է, սակայն օվկիանոսը կաթիլներով է բաղկացած, ուստի պատկերավոր կերպով Յունգը բացատրում է մարդու ոգու իմաստը՝ որպես Արարչի մեկ մասնիկ, Աստվածային կերպի փոքրիկ դրսուրում: Հերքելով բանականության վրա մարդկային սեքսուալ բնագդների տոտալ ազդեցության Ֆրեյդի տեսությունը՝ գիտնականը մարդու բանականությունը ներկայացնում է ոչ միայն որպես նյութականացված բնագդների ուղիղ արդյունք, այլ նաև որպես ոգեղեն ինքնության արդյունք. «Քանի որ մեր գիտակցությունը ընդունակ չէ հասկանալ ոգին, ուստի անհեթեթ է հովանավորչաբար կամ առհամարաբար խոսել այն բանի մասին, որոնք առընչվում են այդ երևույթին: Նույնիսկ խոր հավատացյալ քրիստոնյան չի իմանում Աստծու գախտնի ճանապարհները և պարտավոր է նրան որոշում ընդունելու հնարավորություն տալ՝ աշխատել մարդու վրա արտաքին եղանակով, թե՝ ոգու միջոցով, ներքին եղանակով: Այդ պատճառով հավատացյալը չպետք է վախենա այն բանից, որ գոյություն ունեն

somnia a Deo missa (Աստծու կողմից ուղարկված երազներ) և ինքնաբուխ լուսավորություններ, որոնք կախված չեն արտաքին պատճառներից»:<sup>234</sup>

Ենելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ժամանակի և իրավիճակի փոխարարերությունները ուղղեցվում են անձանաչելի գորության ուղղիղ ազդեցության պայմաններում, որի շնորհիվ ստացվում է փոխլրացնող շրջապտույտ, որտեղ «որոշման ոազմավարությունը» մասամբ ազդում է դեպքերի զարգացման հաջորդականության վրա, իսկ դեպքերի զարգացման ոչ ոացիոնալ փոխակերպումը ազդում է «ոազմավարական որոշումների» արդիականացման վրա: Այս գործընթացը հայտնի է «Քաղաքակրթության Էվոլուցիա» գիտաբառով:

Որպես «իրավիճակ»՝ դիտարկվում է «ներքին» և «արտաքին» ժամանակների փոխազդեցությունը և դրանց համատեղ ազդեցությունը կյանքի վրա: Այս պարագայում որոշումը հանրության կողմից պահի վերլուծության արդյունքում հայտնաբերված ուղիղ կամ հարաբերական վըտանգների չեզոքացման համար իրականացվող ոացիոնալ միջոցառումների վերհանումն ու իրագործումն է: Այդ միջոցառումների ամբողջությունն էլ հենց Ազգային շահի իրականացումն է:

Անվտանգության ապահովման և մասնակցային մշակույթի զարգացման նկատառումներով քաղաքական միտքը տարբեր կերպ է մեկնաբանում «ներքին» և «արտաքին» ժամանակների արդիականացնող խնդիրը: Նրա ազդեցությունը մարդկության սոցիալական և քաղաքական իրավիճակի վրա հիմնականում բացատրվում է տիեզերական գործընթացներով և ֆիզիկական օրինաչափություններով: Ժամանակը, ըստ էության, կոնկրետ չափողականությունից զուրկ երևույթ է. այն գոյություն ունեցող կարգավիճակ է և այն «վերացական» հասկացություն է: Ժամանակի ծագումը բացահայտման ենթակա չէ. ոչ ոք չի կարողացել և չի կարողանա պատասխան այն փիլիսոփայական հարցին, թե արդյո՞ք կար ժամանակ, որ ժամանակ չկար: Սակայն ժամանակի տնօրինումը միանգամայն կիրառական է՝ այն կարելի է արագացնել և դանդաղեցնել, այն կարելի ուղղորդել ցանկացած հունով, քանի որ ժամանակն ընթանում է ոչ համաշափ և արտահայտվում է տարբեր կերպով՝ կապված նրանից, թե տվյալ դատարկությունը լրացնող էներգիան ինչպիսի հատկանիշներով է օժտված: ՈՒստի կապված անհատական հատկություններից՝ քաղաքակրթական ձկունությունից, միֆամտածողությամբ ազգերն ու ժողովուրդները զարգանում են անհամաշափ և նրանց տնօրինած ժամանակի ըն-

<sup>234</sup> Юнг К. Психология и алхимия, пер. с англ. С. Удовика – М.: ACT: ACT МОСКВА, 2008. – [5] (Philosophy) с. 31.

թագքը տարբեր ծավալների ազդեցություն է թողնում պետության զարգացման գործընթացում:

Տարբեր քաղաքակրթությունների քաղաքական մշակույթները առանձնանում են իրենց ժամանակային ոիթմիկայով: Կան դինամիկ մշակույթներ, որոնք անզուսապ կերպով վաղվա օրվան են ձգտում, բայց կան և ուրիշներ, որոնցում ժամանակի դանդաղեցված ոիթմը ծնում է հավերժական թախիծ «կորսյալ դրախտի» համար: Դա է պատճառը, որ քաղաքակրթությունների երկխոսության ընթացքում չկա բոլորի համար միևնույն ժամանակային տարածություն, իսկ դա ծնում է քրոնոքաղաքանության ամենադրամատիկ պարադոքսներից մեկը՝ ինչքան ավելի ցածր ժամանակային ոիթմիկա ունի քաղաքակրթությունը, այնքան մեծ է այն հնարավորությունը, որ վերջինիս ավանդական քաղաքական տարածությունը կսկսի կրծատվել ավելի դինամիկ մշակույթների ներխուժման ազդեցության պատճառով:

Համաձայն անտիկ հելենիստական մտածողության՝ ժամանակը երկակի դեմք ունի: Հելենները տարբերում էին ձևական ժամանակը՝ քրոնոսը, իրական ժամանակից՝ քահրոսից, որը լի է բովանդակությամբ և էներգիայով:

Քաղաքական ժամանակը նույնացվում է քահրոսին, որը հսկում է պատմության դարակազմիկ իրավիճակները: Նրա ոիթմերը կարելի է զգալ և փոքրիկ քաղաքական խմբակցություններում և քաղաքական բազմահազար հանրահավաքներում, որտեղ թևածում է ոգեղեն տագնապը, այն կարող է ուժ ձեռքբերել քաղաքական առաջնորդի մարզարեական խոսքից: Սակայն յուրաքանչյուր քաղաքական իրադարձություն իր «հասունացման» ժամանակն ունի, հնարավոր չէ իմիտացիոն կերպով պատվաստել դեպքերի զարգացման մողելը անկախ իրավիճակի հրամայականի, քանի որ «իրավիճակը» մշակույթի ներկան ու ապագան է, այն բխում է մշակույթից և ազդում է մշակույթի վրա՝ արդիականացնելով այն: ՈՒստի այն ամենը, ինչ տեղի է ունենում մաթեմատիկական ձըշգրտությամբ կարելի է կանխատեսել և ձևափոխել. ճակատագիրը կա անկախ հանգամանքներից, ինչպես որ կա ժամանակն ու իրողությունը, բայց նրան ծնել է ժամանակի դատարկությունը լրացնող էներգիան, որը ընթացք է հաղորդում կյանքին:

«Կայրոս» հասկացության վերաբերյալ իր եզրակացություններն ունի աստվածաբան Պ.Թիլլիիը. «Լոկ պատկերավոր և հեռակա դիտարկման դեպքում ժամանակը հանդես կգա դատարկ տարածության տեսքով, որը ունակ է տեղավորել ցանկացած բովանդակություն, սակայն նրա համար՝ ով կընկալի կյանքի դինամիկ ստեղծագործական բնույթը, ժամա-

նակը հագեցած է լարվածություններով, իդի է հնարավորություններով, այն ունի որակյալ բնավորություն և լի է տրամաբանությամբ: Ամեն ինչ չէ, որ հնարավոր է ամեն ժամանակ, ամեն ինչ չէ, որ ճշմարիտ է ամեն ժամանակ և ամեն ինչ չէ, որ հարկավոր է ամեն ժամանակ»:<sup>235</sup>

Վերոգրյալից երևում է, որ հասարակությանը սպառնացող մարտահրավերները բազմաբնույթ են և անկանխատեսելի, դրանք գտնվում են անընդհատ որակական և քանակական ձևափոխումների մեջ, ուստի գոյություն չունի և չի ունենա մի ընդհանուր իրավիճակ, որը հավասարակշռված կապահի դրությունը՝ ապահովելով անվտանգության բարձր մակարդակ:

Բոլոր տեսություններն և արդիականացման մոդելները հիմնվում են հասարակական զարգացման անհամաշափության սկզբունքի ընդունման վրա, պետությունների զարգացման մինչայժմեական շրջանի առկայության, ինչպես նաև հետամնաց երկրների արդիականի (հետարդիականի) փոխակերպման անհրաժեշտության գիտակցման վրա: Այսպիսով՝ «արդիականացում» գիտաբառը միևնույն ժամանակ և նշանակում է հասարակական կերպափոխումների իրավիճակ և նշանակում է ժամանակակից հասարակարգերի անցման գործընթաց: Անհամաշափության սկզբունքից ելնելով՝ արդիականացումը կարելի է դասակարգել երկու խմբի՝ ինքնաբերաբար և արտացոլված: Ինքնաբերաբար ծագող արդիականացման կրողները բնականոն զարգացմամբ բարձր մակարդակի հասած երկրներն են, իսկ մյուս երկրները, որոնք դեռ պիտի անցնեն այդ ժանապարհը հանդիսանում են արտացոլված արդիականացման կրողներ: Այսինքն՝ վերջինների մոտ արդիականացման ուղիները փոխառնընդում են այդ ուղին արդեն անցած երկրներից:

Հռչակավոր վիճակագիր Մեղիսոնը, ուսումնասիրելով մի շարք երկրների վիճակագրական տվյալները, նկատեց, որ դրանք պարբերաբար կրկնվում են 200 տարվա պատմության ընթացքում: Առաջին հերթին պարզ դարձավ, որ երկրները միանգամայն ճշգրիտ դասակարգվում են երեք խմբի, և նրանցում առկա խզվածությունը կարող է մեծանալ ժամանակի ընթացքում, իսկ երկրորդը՝ պարզվեց, որ երկրները դժվարությամբ են լքում իրենց զարգացման խումբը և անցում կատարում ավելի զարգացած խումբ: Ողջ XX դարի ընթացքում միայն Ճապոնիային է հաջողվել զարգացման երրորդ խմբից անցում կատարել առաջին խումբ:

Ժամանակի երկվության ֆենոմենի ուսումնասիրությունը կօգնի մեզ ընկալել խնդրի յուրահատկությունը և կընձեռի հնարավորություն

<sup>235</sup> Тиллих П. /Избранное. Теология культуры. М.: Юристъ, 1995, с. 217.

ազդել, ոչ թե պայքարել ստեղծված դրության հետևանքների հետ, այլ պատմության զարգացումը տանել մեզ շահեկան ձանապարհով՝ վերափոխելով ստեղծված դրությունը ազգային շահի արդիականացման ըսկըզբունքին հավատարիմ կերպով:

Երկրների շարժընթացի ուղեծիրը այն ֆենոմենն է, որին հելենները անվանել էին «Քրոնոս»: Քրոնոսը վտանգավոր ժամանակն է, այն հակում է առաջացնում իր նկատմամբ և ստիպում է երկրներին պարբերաբար կրկնել սեփական պատմությունը զարգացման առավել բարձր մակարդակում: Այսինքն դա ներքին ժամանակն է, որը, եթե համեմատենք տիեզերական մարմինների հետ, կարելի նույնացնել լուսնին, քանի որ այն շարունակ պտտվում է Երկրի շուրջ, բայց ակամա պտտվում է նաև Արեգակի շուրջ, քանի որ Երկիրը, լինելով իրեն արտաքին քաիրոս, պտտվում է Արեգակի շուրջ: Դա է պատճառը, որ թէև պատմությունը կրկնվելու հակում ունի, սակայն այն տեղի է ունենում զարգացման մեկ այլ հարթության վրա: Իսկ զարգացման վրա ազդում է ինքնաբերաբար ժամանակը՝ քաիրոսը:

ՈՒսումնասիրելով քաղաքակարթությունների պատմությունը՝ Ա. Թոյնբին նկատեց, որ պատմական դրությունները հազարամյակների ընթացքում կոնկրետ քաղաքակրթությունների սահմաններում կրկնվել են քանից ավելի անզամ: Սակայն գիտնականը չի համարում, որ դա հաստատուն ճակատագիր է և բեկման ենթակա չէ: Հարցին, թե արդյո ք ներկայիս քաղաքակրթությունը գնում է անկման, նա միանշանակ պատասխանում է ոչ: Հիմնավորելով դա նրանով, որ թէև հաջորդականությունները գորեն ազդեցություն ունեն պատմության ընթացքի վրա, բայց և այնպես բանականությունը և մարդկային աշխարհընկալումը ունեն հնարավորություն կոտրել ցանկացած կարծրատիպ՝ փոխելով դեպքերի զարգացման պատմական տրամաբանությունը. «Թէև հանելուկները հաճախ դժվար է վերծանել, սակայն իրականում դրանք պարզ և բացահայտ ասում են մեզ այն, ինչը մենք պետք է իմանանք առաջին հերթին: Դրանք մեզ ասում են, որ մեր ապագան կախված է մեզանից: Մենք պարզապես «անբեկանելի» ճակատագրի պատանդները չենք»:<sup>236</sup>

Ներկայիս քաղաքագիտական միտքը կատարում է առաջին քայլերը նոր հասարակարգի յուրահատկությունների բացահայտման ուղղությամբ: ՈՒշագրավ է այն, որ քաղաքագիտական դպրոցների բոլոր հոսանքներն ել չեն փորձում կառուցել նոր հասարակարգ. դա անհնարին է

<sup>236</sup> Тойнби А. Цивилизация перед судом истории. Мир и Запад: [пер. с англ.]. – М.: АСТ: Астрель; Владимир: ВКТ, 2011. – [2] с. 47.

և անհեռանկարային: Սպասվող փոփոխությունները հավակնում են փոփոխել ոչ միայն հասարակական կարգը իր սոցիալ-տնտեսական և քաղաքական դաշտերով, այլ նաև մարդու ոգեղենականությունն ու ընդհուած մինչև նրա կենսաբանական տեսակար:

Դա հաշվի առնելով՝ հետազոտողներն ու ֆուտուրոլոգները որոշակի կանխատեսումներ և վերլուծություններ են կատարում՝ փորձելով ձևավորել ապագայի տեսլական և աշխարհայացքների արժեքաբանական համակարգ, որպեսզի անթրոպոգեն ազդեցության շնորհիվ անկանոն դեպքերի զարգացմանը օժտեն կանոնավոր կանխատեսելիությամբ՝ բնական կերպով արդիականացնելով ազգային շահերը:

Այդ մասին Ռ.Ինգլիսարտը արտահայտվում է հետևյալ կերպ. «Մարդկանց աշխարհընկալման (worldviews) խորքային և համատարած փոփոխությունները, կերպափոխում են տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքը՝ վերահիմաստավորելով քաղաքական և տնտեսական նպատակները, կրոնական նորմերն ու ընտանեկան արժեհամակարգը: Այս փոփոխությունները իրենց հերթին ազդում են տնտեսական առաջընթացի տեմպի վրա, քաղաքական կուսակցությունների ռազմավարական նպատակների և ժողովրդավարական ինստիտուտների հավակնությունների վրա»:<sup>237</sup>

Այսինքն՝ տեղի է ունենում հերթական կյանքի շրջապտույտը դրություն-որոշում իրար հաջորդող պարադիգմաների համատեքստում: Իրականությունը փոխվել է, ուստի աշխարհաճանաչողությունը՝ արդիականանալով, կիամապատասխանեցվի տվյալ իրականությանը, ինչպես նաև՝ աշխարհաճանաչողությունը ձևափոխելով՝ դեպքերի զարգացումը կուղորդենք շահեկան ուղղությունամբ:

Շոշափելով Թոփլերի կողմից առաջարկվող «պրակտոպիստական» մոտեցումը՝ փորձ է կատարվում քաղաքական արդիականացման ընկալմանը շնորհել անսահման մտածելակերպի տիրույթներով, դրանով իսկ արդիականացնել ազգային շահերի ողջ համակարգը՝ հատելով զարգացող իրավիճակների ազրեսիվ ազդակների հնարավորությունը ազգի նկատմամբ և ուղղորդելով իրավիճակի զարգացումը ազգային շահը բնականոն արդիականացնելու սկզբունքներին հավատարիմ հունով:

Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա ազգին, պահպանելով սեփական քաղաքակրթական և էթնո-գենետիկ յուրօրինակությունը, քայլել ժամանակի հրամայականին համընթաց և պահպանել պաշտպան-

<sup>237</sup> Инглхарт Р./ Постмодерн: Меняющиеся ценности и изменяющиеся общества/ ПОЛИС. 1997, N 4, с. 6.

վածության բարձր մակարդակը քաղաքակրթական համագործակցությունների և փոխարարելությունների պայմաններում:

Համաձայն Է. Թոֆլերի՝ մարդկությունը, սպառելով կենցաղավարման հին աշխարհի լուսավորմը, անցում է կատարում իր իսկ արդիականացմամբ պայմանավորված նոր հասարակարգի՝ որտեղ ավանդական բոլոր սկզբունքները ենթարկվում են կերպափոխման և վերահմատավորման: Մոտավորապես 10000 տարի առաջ սկսվեց գյուղատնտեսական հեղափոխությունը, որը հիմնովին փոխեց մարդկանց հին հասարակարգը, երբ մարդիկ ապրում էին փոքրիկ ցեղերով և հիմնականում զբաղվում էին հավաքչությամբ ու որսորդությամբ: Գյուղատնտեսական հասարակարգը Թոֆլերը անվանում է «Առաջին ալիք»: «XVII դ. փոփոխությունների այդ առաջին ալիքը դեռևս չէր սպառել իրեն, երբ Եվրոպայում հանկարծ իհայտ եկավ արդյունաբերական հեղափոխությունը, և սկսվեց համաշխարհային փոփոխությունների երկրորդ մեծ ալիքը: Այդ նոր գործընթացը՝ արդյունաբերականացումը, շատ ավելի արագ սկսեց շարժվել՝ ընդգրկելով մայրցամաքներ և երկրներ»:<sup>238</sup>

Հստ թոֆլերյան «Երեք ալիքների» տեսության՝ մարդկությունը XXI դարում կանգնած է «Երրորդ»՝ ամենը կերպափոխող, ալիքի շեմին: Այս պահի դրությամբ ընթանում է անցման գործընթացը, որը պայմանավորված է ճգնաժամերով, հին համակարգերի տապալումով, պետական, ոչ պետական և միջազգային բազում ցնցումներով, որի ընթացքում արդիականացվող երևույթները ստանալու են նոր նշանակություն, իսկ կարծրացած և չկերպափոխվող երևույթները դուրս են մնալու ժամանակի հոսանքից: «Երբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում արդյունաբերականության հոսանքը հասավ իր գագաթնակետին, երկրի վրա սկսեց թափ հավաքել քշերի կողմից ընկալվող Երրորդ ալիքը՝ կերպափոխելով այն ամենը, ինչին հպվեց: Այդ պատճառով շատ երկրներ միաժամանակ զգում են երկու կամ նույնիսկ երեք միանգամայն տարբեր «փոփոխության ալիքների» ազդեցությունը, ընդ որում երեքն ել միմյանցից տարբերվում են թե՝ արագությամբ, թե՝ զորեղությամբ»:<sup>239</sup>

Ժողովրդավարությունը որպես քաղաքական արդիականացման հիմնական պայման է դիտարկում Ս. Հանթինզտոնը: Նա համարում է, որ պետությունների ժամանակին համահունչ ընթացքի հիմնական մողելը

<sup>238</sup> Тофлер, Э. / Третья волна: Пер. с англ. – М.: ООО «Издательство АСТ», 2004. – [2] (Philosophy). с. - 39.

<sup>239</sup> Նույն տեղում, էջ 39:

ժողովրդավարության արժեքների արմատավորումն է: Հանթինգտոնը ժողովրդավարության հաղթարշավը նկարագրում է երեք փուլերով (ալիքներով), որոնց ներդրման և արմատավորման գործընթացը ուղղեկցվել է ցնցումներով և ճգնաժամային իրավիճակներով: Սակայն բռնության մակարդակը նա համարում է չափավոր և արձանագրում է այն հանգամանքը, որ ժողովրդավարացման երրորդ ալիքը հաղթանակեց փոխազնումների և ընտրության արդյունքում, որն էլ տարբերակեց այդ գործընթացը այլ ռեժիմների փոխակերպման գործընթացից:

XXI դարում ժողովրդավարության սուրբ ուղղվեց Մերձավոր Արևելք: Արաբական երկրների իրադարձությունները, որոշ վերլուծաբաններ համարում են դեմոկրատացման «չորրորդ ալիք» և ժողովրդավարության արժեքների հաղթանակ, սակայն ցնցումների և բռնությունների մակարդակը այս իրադարձությունների ընթացքում կանգնեցրեց տարածաշրջանը հումանիտար աղետի առջև:

Այդ իրադարձությունների կապակցությամբ այսպես է արտահայտուել Զ. Բժեզինսկին. «Ժողովրդավարությունը Միրիա և Իրան արտահանելու ԱՄՆ փորձերը վտանգավոր երազանքներ են: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Անգլիայի և Ֆրանսիայի կողմից հաստաված մերձարևելյան պետությունների սահմանները կայունությամբ աչքի չեն ընկնում: Նույնիսկ տարածաշրջանի առավել կայուն երկրները՝ Թուրքիան և Իրանը, խոցելի են ներքին էթնիկական և կրոնական հակամարտությունների առաջ»:<sup>240</sup>

Պատմությունը ցույց է տալիս, որ էթնո-քաղաքականությունը եղել և մնում է գերակա սկզբունք՝ ներառելով մնացյալ բոլոր հարաբերությունները, և դա բնական երևույթ է, քանի որ մարդու անձնական շահերը նույնանկանանում են սեփական մարդաբանական և մշակութային տիպին հատուկ հանրային շահերին: ՈՒստի ակնհայտ է, որ ազգային յուրահատկություններով պայմանավորված աշխարհընկալումն իր ասինցիատիվ ենթագիտակցությամբ բազմազան է ձիշտ այնքանով, որքանով որ բազմազան է Երկրի էթնո-քաղաքակրթական բնաշխարհը: Հանրագումարելով՝ նշենք, որ հետարդիական հասարակարգի ձևավոման շեմին քաղաքակրթական բազմազանության քաղաքական ակտիվության դրսեվորումները նոր մարտահրավերների առիթ են դառնալու ազգ-պետությունների համար, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է լինելու ազգի համախմբվածության պայմաններում վարել ձկուն և գրագետ

<sup>240</sup> <http://www.panarmenian.net/arm/news/129306/>

քաղաքականություն՝ բախման գաղափարախոսությունից երկխուսության անցում կատարելու համար:

## НАЦИОНАЛЬНЫЕ ИНТЕРЕСЫ КАК СОСТАВНАЯ ЧАСТЬ ПОЛИТИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ

**СИМОНЯН ГУРГЕН**  
*Соискатель Академии  
государственного управления РА*

**Ключевые слова:** цивилизация, нация, культура, развитие, модернизация, влияние времени, трансформации социальных систем, социокультурная трансформация, демократия, диалог.

### АННОТАЦИЯ

В условиях современных социальных систем актуален вопрос изучения проблемы политической модернизации, что позволяет выявлять цивилизационные аспекты демократических трансформаций. В статье проводится анализ постмодернистского мировоззрения, для которого характерны альтернативные системы ценностей, дестабилизирующие ситуацию в подсознании человека, что часто становится причиной иллюзорных и нецелесообразных революций в мировоззрении индивида.

### NATIONAL INTERESTS AS PART OF THE POLITICAL MODERNIZATION

**SIMONYAN GURGEN**  
*Applicant of the Public Administration  
Academy of the Republic of Armenia*

**Keywords:** civilization, nation, culture, development, modernization, the influence of time, transformations of social systems, sociocultural transformations, democracy, dialogue.

### ABSTRACT

In terms of modern social systems there is an actual issue of study the problem of political modernization, which will allow to identify the civilizational aspects of democratic transformations. In this article there is an opinion, that postmodern worldview, with its alternative value systems, destabilize the situation in human subconscious, which often causes for illusory and inappropriate revolutions in human worldviews.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ ԴԱՎԱԿԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԳՎԱԿԱՆ  
ԴԱՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ



АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ  
ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ  
ИМ. Х. АБОВЯНА

ARMENIAN STATE PEDAGOGICAL  
UNIVERSITY AFTER  
KH. ABOVYAN

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
2012**

Քաղաքական արդիականացումը և  
ՀՀ քաղաքական գործընթացները

• Հավելված

— • — • — • —

**ВОПРОСЫ ПОЛИТОЛОГИИ  
2012**

Политическая модернизация и  
политические процессы РА

• Приложение

— • — • — • —

**POLITICAL SCIENCE ISSUES  
2012**

Political modernization and  
political processes in RA

• Annex

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ 2013 YEREVAN

ՀՏԴ 32.001 :06

ԳՄԴ 66.01

Ք 161

Խմբագրական խորհուրդ՝

Խմբագրական խորհրդի նախագահ՝ –

Միքայել Ա. Կ. պ.գ.դ., պրոֆես  
Գլխավոր խմբագիր՝ - Շիրինյան Լ. Ղ. ք.գ.դ.

Անդամներ՝ - Սուրիայան Հ. Հ. ք.գ.թ.  
Օրդուխանյան Է. Հ. ք.գ.թ.  
Թելունց Ա. Ա. դոցենտ

Ք 161

Քաղաքագիտության հարցեր 2012:

Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական  
գործընթացները (Քաղաքագիտական հանրապետական  
երրորդ գիտաժողովի նյութեր). – Եր.: Խ. Արովյանի անվ.  
պետական մանկավարժական համալսարան, 2013. – 258 էջ:

ՀՏԴ 32.001 :06

ԳՄԴ 66.01

ISBN 978 – 99941 – 69 – 33 – 7

© <<Մանկավարժ>> հրատ. 2013